Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Պ-545-24.02.2009-ԳԿ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Հայաստանի Հանրապետության պատվավոր կոչումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության պատվավոր կոչումների մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի հունիսի 11-ի ՀՕ-105-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածը լրացնել «ժ.1» կետով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«ժ.1. Հայաստանի Հանրապետության վաստակավոր գրադարանավար»:

Հոդված 2. Օրենքի 13-րդ հոդվածը լրացնել «Հոդված 13.1» մասով հետեւյալ բովանդակությամբ.

«Հոդված 13.1. Վաստակավոր գրադարանավարի պատվավոր կոչումը

Վաստակավոր գրադարանավարի պատվավոր կոչում է շնորհվում գրադարանային գործի բնագավառում նվազագույնը 15 տարվա աշխատանքային փորձ, մասնագիտական ակնառու վաստակ եւ նվիրում ցուցաբերած գրադարանավարներին, ովքեր իրենց գործունեությամբ խթանել են ոլորտի զարգացմանը, նպաստել հանրության կրթության ու դաստիարակության գործին, հոգեւոր-մշակութային արժեքների պահպանմանը, հանրահռչակմանն ու տարածմանը»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության պատվավոր կոչումների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

N	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, ենթակետը	Առաջարկության բովանդակությունը	Առաջարկության վերաբերյալ հեղինակի եզրակացությունը
1.	ՀՀ կառավարություն	1-ին և 2-րդ հոդվածներ	«ավելացնել» բառը փոխարինել «լրացնել» բառով.	Ընդունվել է
2.	ՀՀ կառավարություն	2-րդ հոդված	«արժեքների» բառից հետո լրացնել «պահպանմանը» բառը	Ընդունվել է
3.	պատգամավոր Լիլիթ Գալստյան	2-րդ հոդված	«աշխատանքային երկարամյա» բառերը փոխարինել «նվազագույնը 15 տարվա աշխատանքային փորձ» բառերով, իսկ «բացառիկ կարողություններ» բառերը փոխարինել «ակնառու վաստակ» բառերով	Ընդունվել է